«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ 2016Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Ռադիսոն Բլու հյուրանոց, «Արմենիա» դահլիճ
հինգշաբթի, 25 մայիսի 2017թ., 12:00

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
27 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Էդուարդ Զամանյան

Բանկի Վարչություն
Վարդան Աթայան (նախագահ)
Գոհար Գրիգորյան
Օվսաննա Առաքելյան
Մեսրոպ Հակոբյան
Դավիթ Պետրոսյան
Գուրգեն Ղուկասյան
Տիգրան Բաղանյան

Հրավիրվածներ
ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչներ
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական ընկերության ներկայացուցիչներ
Հայաստանի Բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյան
Միջազգային և հայաստանյան կազմակերպությունների ներկայացուցիչներ
Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը ժամը 12:00-ին և ողջունեց բոլոր բաժնետերերին և հյուրերին:
Գագիկ Զաքարյանն ամփոփ ներկայացրեց Յունիբանկի հաշվետու տարվա աշխատանքի արդյունքները: 2016 թվականը նշանավորվեց ընդհանուր կապիտալի՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվի պահանջի ապահովմամբ, Բանկի ակտիվների որակի զգալիորեն բարելավմամբ, բիզնես գործընթացների և ծառայությունների որակի հետևողական կատարելագործմամբ: Moody's միջազգային գործակալությունը բարձրացրել է Բանկի վարկանիշը մինչև B2 մակարդակի՝ կայուն կանխատեսմամբ: Առանձնացրեց, որ տրամադրված վարկերի միջին օրական քանակը 1000-ի հասցնելու արդյունքում մանրածախ բիզնեսի շահույթը նախորդ տարվա համեմատ աճեց երկու անգամ: Նշեց, որ իր 15-ամյա գործունեության արդյունքում Յունիբանկին հաջողվել է դառնալ այնպիսի բանկ, որին վստահում են 325 000 հաճախորդ և 200 բաժնետեր: Այսօր Բանկի տարածքային ցանցը ներառում է 47 մասնաճյուղ, 52 պրոմո-կետ և ներկայացուցչություն Ռուսաստանում:
Բարձր գնահատելով ներդրողների վստահությունը Բանկի հանդեպ, 2016 թվականին Բանկի Խորհուրդը որոշում ընդունեց սովորական բաժնետոմսերի սեփականատերերին 2016թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի համար վճարել միջանկյալ շահութաբաժիններ՝ սովորական անվանական բաժնետոմսերի տեսքով՝ 12.9% տարեկան եկամտաբերությանը համարժեք հաշվարկով:

Խոսելով Բանկի առաջիկա չորս տարիների ռազմավարական ծրագրի մասին՝ **Գագիկ Զաքարյանը** նշեց, որ Յունիբանկի հիմնական նպատակն է ընդլայնել շուկայում իր մասնաբաժինը, 2020 թվականին ապահովելով 5 մլրդ ՀՀ դրամի շահույթ, և էապես բարձրացնել Բանկի ներդրումային գրավչությունը:
Բանկի ղեկավարության անունից Գագիկ Զաքարյանն իր երախտագիտությունը հայտնեց ներդրողներին՝ վստահության, հաճախորդներին՝ հավատարմության և Բանկի անձնակազմին՝ թիմային աշխատանքի համար: Հատուկ շնորհակալություն հայտնեց Կենտրոնական բանկին և Հայաստանի Բանկերի Միությանը Յունիբանկի ողջ գործունեության ընթացքում ցուցաբերած շարունակական աջակցության համար:

Ժողովի նահագահ **Գագիկ Զաքարյանը** Ժողովի քարտուղար նշանակեց Հաշվիչ հանձնաժողովի նահագահ Աննա Բադոյանին:
Հաշվիչ հանձնաժողովի նախագահ **Աննա Բադոյանը** ներկայացրեց, որ 25.05.2017թ. «Յունիբանկ» ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցանկը կազմված է 2017թ. ապրիլի 10 դրությամբ:
Ժողովի գումարման հայտարարությունը պատշաճ կերպով հրապարակվել էր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել էին բաժնետերերին փոստի միջոցով:
Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 23.05.2017թ., ժամը 10:00: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվել նաև մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը ստացված քվեաթերթիկներով տրամադրված ձայները: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 25.05.2017թ.:

Բանկի քվեարկող տեղաբաշխված բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմեց 172,886,525 հատ, որից քվեարկությանը մասնակցել է 169,685,645 ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսեր, կամ տոկոսային հարաբերությամբ 98.15%-ը:

Քվորումն ապահովված է:

Հարց 1: Յունիբանկ» ԲԲԸ 2016թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվության հաստատում:

Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Վարդան Աթայանը ներկայացրեց «Յունիբանկ» ԲԲԸ 2016թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը: Նշեց, որ 2016 թվականը ռազմավարական տարի էր ՀՀ բանկային համակարգի հետագա զարգացման համար, և, չնայած տնտեսական ակտիվության տեմպերի որոշակի դանդաղեցմանը և վարկավորման ծավալների կրճատմանը, Յունիբանկին հաջողվեց դիմակայել մարտահրավերներին և ընդհանուր առմամբ կատարել իր առջև դրված խնդիրները:
Նշեց, որ առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել վարկային պորտֆելի որակի բարձրացմանը, բանկային ռիսկերի կառավարման համակարգի բարելավմանը, խնդրահարույց վարկերի հետբերմանը, ինչպես նաև գործընթացների արդյունավետության բարձրացման արդյունքում՝ վարչական ծախսերի կրճատմանը:
2016 թվականին Բանկն իրականացրել է անվանական սովորական բաժնետոմսերի երեք թողարկում և ամբողջությամբ տեղաբաշխել ներկայացված ծավալը (մոտ 11,3 մլրդ ՀՀ դրամ), ցուցակել այն Nasdaq OMX Armenia ֆոնդային բորսայում:
Հաշվետու տարում Բանկը շարունակել է իր ռազմավարական ուղղության՝ մանրածախ բիզնեսի դինամիկ զարգացումը, ամրապնդելով իր դիրքերը առաջատարների շարքում, ինչպես նաև ակտիվ մասնակցություն է ունեցել հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրերում, ակտիվ աջակցություն է ցուցաբերել փոքր և միջին ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին: Զարգացնելով համագործակցությունը միջազգային կառույցների հետ՝ Բանկը հնարավորություն ունեցավ ընդլայնել բիզնես վարկավորման ծրագիրը և ապահովել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը ձեռնարկատերերի ավելի լայն շրջանակի համար: Հետևելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միտումներին՝ 2016թ. ընթացքում Բանկը շարունակել է ներդրումներ կատարել այդ ոլորտում: Վճարային համակարգերին նվիրված 2016թ. դեկտեմբերին Աթենքում կայացած «Ապագայի բանկ 2016» միջազգային համաժողովում Յունիբանկը ճանաչվեց «Տարվա գործընկեր»:
Ներկայացրեց Բանկի 2017-2020թթ. ռազմավարական ծրագրով սահմանված նպատակները, որոնց հաջող իրականացման համար Բանկը նախաձեռնել է միջոցառումներ արդյունավետ վարչական կառուցվածքի, ռիսկերի կառավարման համակարգի, բիզնես-գործընթացների կատարելագործման ուղղությամբ:
Ամփոփելով՝ **Վարդան Աթայանը** շնորհակալություն հայտնեց Բանկի բոլոր հաճախորդներին, բաժնետերերին և գործընկերներին վստահության և համագործակցության համար:

Վարդան Աթայանը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց «Յունիբանկ» ԲԲԸ 2016թ. գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով՝

Կողմ՝ 169,666,567 ձայն (99.989%)
Դեմ՝ 0 ձայն

Ձեռնպահ՝ 19.078 ձայն (0.011%)
Անվավեր՝ 0 ձայն

Հարց 2: «Յունիբանկ» ԲԲԸ 2016թ. ֆինանսական հաշվետվությունների հաստատում: «Յունիբանկ» ԲԲԸ 2016թ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ «Գրանթ Թորնթոն» աուդիտորական ընկերության եզրակացության ներկայացում:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը ներկայացրեց Խորհրդի նախնական հաստատմանն արժանացած Բանկի 2016 թվականի տարեկան հաշվետվությունները՝ հետևյալ հիմնական ցուցանիշներով.

1.	ակտիվներ	185.396.089 հազ. ՀՀ դրամ
2.	պարտավորություններ	150.553.046 հազ. ՀՀ դրամ
3.	կապիտալ	34.843.043 հազ. ՀՀ դրամ
4.	տոկոսային եկամուտներ	21.329.971 հազ. ՀՀ դրամ
5.	տոկոսային ծախսեր	(12.968.927) հազ. ՀՀ դրամ
6.	այլ եկամուտներ	(9.526.696) հազ. ՀՀ դրամ
7.	տարվա շահույթ/վնաս	(443.218) հազ. ՀՀ դրամ

2016թ. ընթացքում Բանկի դրամական հոսքերը բաղկացած են՝
- դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ՝ 3.351.755 հազ. դրամ,
- գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր՝ 12.955.618 հազ. դրամ
- դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից՝ (7.222.160) հազ. դրամ
- զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից՝ (1.930.158) հազ. դրամ
- դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ՝(7.663.616) հազ. դրամ
- արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ (128.803) հազ. դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ՝ 26.012.823 հազ. դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 33.547.636 հազ. դրամ:

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց «Յունիբանկ» ԲԲԸ 2016թ. ֆինանսական հաշվետվությունները հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխանելու վերաբերյալ «Գրանթ Թորթոն» անկախ աուդիտորական ընկերության եզրակացությունը, համաձայն որի «ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Յունիբանկ» ԲԲԸ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների»:

Գոհար Գրիգորյանը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հաշվետու տարում արձանագրված վնասի պատճառների վերաբերյալ բաժնետրոջ կողմից բարձրացված հարցին Վարչության նախագահ **Վարդան Աթայանը** պարզաբանեց, որ Բանկի ֆինանսական արդյունքների վրա բացասական ազդեցություն են ունեցել վերջին երկու տարիներին Հայաստան կատարված տրանսֆերտների և վաճառքների ծավալի նվազումը, 2014թ. վերջին ՀՀ դրամի արժեզրկումը, որոնք հանգեցրել են ժամկետանց վարկերի ծավալի աճին: Նշվածի արդյունքում վարկային պարտավորությունների վերակառուցման հետ մեկտեղ Բանկը կատարել է լրացուցիչ պահուստավորում: **Վարդան Աթայանը** պայմանավորեց ոչ միայն տնտեսության վատթարացմամբ, այլև որոշակի չափով Բանկի սուբյետիվ գործոններով :

Բաժնետերերի ժողովը <u>հաստատեց</u> «Յունիբանկ» ԲԲԸ 2016թ. ֆինանսական հաշվետվությունները քվեարկության հետևյալ արդյունքներով՝

Կողմ՝ 169,666,567 ձայն (99.989%)
Դեմ՝ 0 ձայն
Ձեռնպահ՝ 19.078 ձայն (0.011%)
Անվավեր՝ 0 ձայն

Հարց 3: «Յունիբանկ» ԲԲԸ 2016թ. Ներքին աուդիտի հաշվետվության ներկայացում և հաստատում: Բանկի ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացության ներկայացում:

Ներքին աուդիտի տնօրեն Հայկ Սուվարյանը ներկայացրեց, որ հաշվետու տարվա ընթացքում աուդիտորական ստուգման են ենթարկվել թվով 34 մասնաճյուղ, որից թվով 12 մասնաճյուղերում իրականացվել է համալիր ստուգում, իսկ թվով 22 մասնաճյուղերում՝ կարճաժամկետ նպատակային ստուգում: Նշեց, որ վերհանված խնդիրների (թվով 88 հատ տեղային բնույթի խնդիրներ, թվով 37 հատ համակարգային բնույթի խնդիրներ) լուծման նպատակով կազմվել են միջոցառումների

ծրագրեր՝ պատասխանատու ստորաբաժանումների/աշխատակիցների և ժամկետների սահմանմամբ, խնդիրների վերացման նպատակով իրականացվել է հետստուգում: Ներքին աուդիտի եզրակացությամբ, Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:
Հայկ Սուվարյանը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց «Յունիբանկ» ԲԲԸ 2016թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով՝

Կողմ՝ 169,671,335 ձայն (99.992%)
Դեմ՝ 0 ձայն
Ձեռնպահ՝ 14.310 ձայն (0.008%)
Անվավեր՝ 0 ձայն

Հարց 4: Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ Բանկի Խորհրդի անդամ Արարատ Ղուկասյանը Խորհրդի կազմից դուրս գալու դիմում է ներկայացրել: Միաժամանակ նշեց, որ վերջինս շարունակելու է իր աշխատանքային գործունեությունը Յունիբանկում որպես Վարչության նախագահի առաջին տեղակալ: Ներկայացրեց, որ Բանկի մինորիտար բաժնետեր Թիմուր Կորսունը ներկայացրել է Դավիթ Փափազյանի թեկնածությունը Խորհրդի կազմում ընդգրկելու համար: Հաշվի առնելով Դավիթ Փափազյանի որակավորումը և աշխատանքային գործունեությունը, Խորհրդի կողմից առաջարկվել է ընդգրկել Դավիթ Փափազյանին Խորհրդի կազմում:
Այսպիսով, Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացվել է Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ Խորհրդի հետևյալ առաջարկությունները՝

- Խորհրդի կազմի ընտրվելուց հետո դադարեցնել Խորհրդի անդամ Արարատ Ղուկասյանի լիազորությունները՝ համաձայն վերջինիս դիմումի
- Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ
- վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին
- ընդգրկել Դավիթ Փափազյանին Խորհրդի կազմում
- հաստատել Խորհուրդը հետևյալ կազմով՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Դավիթ Փափազյան:

Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով՝ «Յունիբանկ» ԲԲԸ բաժնետեր «Ռիպատոնսո Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության լիազոր ներկայացուցիչներ (սովորական անվանական բաժնետոմսերի քանակը՝ 147.805.227 հատ, արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի քանակը՝ 32.010.000 հատ)
Էդուարդ Զամանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Հրահատ Արզումանյան ՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Դավիթ Փափազյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում:

Ժողովի նահագահը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Ժողովի քարտուղար **Աննա Բաղդասարյանը** ներկայացրեց, որ օրակարգի 4-րդ հարցի քվեարկության արդյունքներով ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Գագիկ Զաքարյան՝ 33,949,001.85 ձայն
Գեորգի Պիսկով ՝ 33,928,252.85 ձայն
Էդուարդ Զամանյան ՝33,927,752.85 ձայն
Հրահատ Արզումանյան ՝33,930,137.85 ձայն
Դավիթ Փափազյան ՝ 33,931,189.6 ձայն

Բաժնետերերի ժողովը որոշում ընդունեց, քվեարկության հետևյալ արդյունքներով, Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ, վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Խորհրդի կազմում ընդգրկել Դավիթ Փափազյանին և Խորհրդի կազմը հաստատել հետևյալ կերպ՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Դավիթ Փափազյան:

Հարց 5: «Յունիբանկ» ԲԲԸ 2016թ. տարեկան ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման որոշման ընդունում:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով Բանկի 2016թ. ֆինանսական գործունեության արդյունքները, Խորհրդի 07.04.2017թ. որոշմամբ առաջարկվում է Ընդհանուր բաժնետերերի ժողովին 2016թ. ֆինանսական արդյունքներով սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժինների չափը սահմանել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար: Համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներկայացված ֆինանսական հաշվետվությունների, ճանաչել 2016թ-ին ձևավորված վնասը (443.218) հազար ՀՀ դրամ գումարի չափով:

Ժողովի նահագահը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց 2016թ. ֆինանսական արդյունքներով սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժինների չափը սահմանել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար: Համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներկայացված ֆինանսական հաշվետվությունների, ճանաչել 2016 թվականին ձևավորված վնասը (443.218) հազար ՀՀ դրամ գումարի չափով:

Կողմ՝ 169,671,335 ձայն (99.992%)
Դեմ՝ 0 ձայն
Ձեռնպահ՝ 14.310 ձայն (0.008%)
Անվավեր՝ 0 ձայն

Հարց 6: Բանկի 2017թ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձի հաստատում:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան 2017 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով Բանկի կողմից հայտարարվել էր մրցույթ, որին մասնակցության հայտ էին ներկայացրել Գրանթ Թորնթոն ՓԲ, Էրնսթ Ընդ Յանգ ՓԲ և Բի-Դի-Օ Արմենիա ՓԲ ընկերությունները:
Մրցութային հանձնաժողովի՝ Բանկի Վարչության կողմից մրցույթը անցկացվել և արդյունքներն ամփոփվել են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգով և Բանկի ներքին իրավական ակտով սահմանված պահանջներին համապատասխան:
06.04.2017թ. Վարչության որոշմամբ Բանկի 2017 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ներկայացված մրցութային առաջարկություններից մրցութային հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել Գրանթ Թորնթոն ՓԲ ընկերությունը:
Հիմք ընդունելով մրցույթի արդյունքները՝ 07.04.2017թ. Խորհրդի որոշմամբ որպես Բանկի 2017թ. արտաքին աուդիտն իրականացնող անձ Բանկի բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվում Գրանթ Թորնթոն ՓԲ ընկերությունը:

Ժողովի նախագահը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում ընդունեց հաստատել «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությանը որպես Բանկի 2017թ. արտաքին աուդիտն իրականացնող անձ:

Կողմ՝ 169,671,335 ձայն (99.992%)
Դեմ՝ 0 ձայն
Ձեռնպահ՝ 14.310 ձայն (0.008%)
Անվավեր՝ 0 ձայն

Ժողովին նաև ելույթ ունեցավ **Հայաստանի Բանկերի Միության նախագահ Սամվել Ճզմաչյանը**: Նա մասնավորապես նշեց, որ Յունիբանկը շարունակում է իր դինամիկ զարգացումը և առավելագույնս բավարարում է հաճախորդների պահանջարկը բանկային ծառայությունների նկատմամբ: Յունիբանկն այսօր ունի բարձր գործարար համբավ և շարունակում է վայելել ժողովրդի վստահությունը: Այդ մասին է վկայում նաև, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի կողմից Յունիբանկ ԲԲԸ Խորհրդի նախագահ Գագիկ Զաքարյանին Արցախին մատուցած ծառայությունների համար «Վաչագան Բարեպաշտ» մեդալով պարգևատրումը:
Հատկանշական և գովելի համարեց այն փաստը, որ Բանկի անձնակազմը՝ գործադիր տնօրեն Վարդան Աթայանի գլխավորությամբ, Բանկի ընդհանուր կապիտալի համալրումը գերադասեց իրականացնել նոր բաժնետերերի ներգրավմամբ, այլ ոչ թե հիմնական սեփականատերերի ներդրումներով:
Սամվել Ճզմաչյանը հատոգմունք հայտնեց, որ երիտասարդ արհեստավարժ կադրերով համալրված թիմի միասնականության շնորհիվ հետագայում ևս կշարունակվի Բանկի առավելագույնս արդյունավետ կառավարման գործընթացը: Ներկայացրեց Հայաստանի Բանկերի Միության որոշումը՝ «Տիգրան Մեծ» հուշամեդալով պարգևատրելու Յունիբանկի Խորհրդի նախագահ Գագիկ Զաքարյանին արագ և բարձր զարգացումներ ապահովելու, իսկ Վարչության նախագահ Վարդան Աթայանին՝ երկարամյա և արդյունավետ գործունեություն ծավալելու համար:

Ժողովի ավարտին ջերմ շնորհակալական խոսքով հանդես եկան Բանկի բաժնետերեր **Ավետիք Աբրահամյանը** և **Ջիվան Գասպարյանը**: **Ավետիք Աբրահամյանն** իր գոհունակությունը հայտնեց Յունիբանկի կողմից մատուցվող ծառայությունների որակից՝ նշելով, որ արդեն 10 տարուց ավելի է ինչ սպասարկվում է Յունիբանկում: **Ջիվան Գասպարյանը** մեկ անգամ ևս իր երախտագիտությունը հայտնեց Բանկի Խորհրդի նախագահին տաղանդավոր ծնողազուրկ երեխաների համար դուդուկի դպրոցի բացմանն աջակցելու համար:

Բանկի մինորիտար բաժնետերիրոջ՝ **Ղեզլաշորի-Ռեզաեիեի Աղասսիի** կողմից առաջարկ ներկայացվեց Բանկի աշխատակիցներին արդյունավետ աշխատանքի համար՝ որպես խրախուսում նվիրել Բանկի բաժնետոմսեր:

Ժողովի մասնակից **Կարինա Պողոսյանն** առաջարկեց ավանդների տարեկան տոկոսադրույքների նվազման դեպքում Բանկի հավատարիմ ավանդատուների համար սահմանել արտոնյալ տոկոսադրույք և ավանդների ժամկետների երկարաձգման դեպքում այն չնվազեցնել:
Ի պատասխան ժողովի նախագահ **Գագիկ Զաքարյանը** նշեց, որ Բանկը ջանքեր է գործադրում իր հաճախորդների պահանջմունքների հնարավորին բավարարման ուղղությամբ: Վարչության նախագահ **Վարդան Աթայանը** հավելեց, որ երկարաժամկետ ներդրումների համար առավել նպատակահարմար է ձեռքբերել պարտատոմսեր, որոնք ունեն ավելի բարձր եկամտաբերություն և մարման երկար ժամկետ:

Օրակարգի հարցերի քննարկումն ավարտելու հետ կապված, Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 13:40-ին:

_____	_____
Գագիկ Զաքարյան	**Աննա Բաղդասարյան**
Նախագահ	**Քարտուղար**

ք. Երևան, 01 հունիսի 2017թ.